

բարձրակարգ անհատից նկատմամբ դեղեց. կազինութիւն կամ յիմարութիւն կրնայ գտնուել.

Քավուր զեղարուեսաէ չէր հասկնար. Հըմքի Տէլլ Միլյոի Ասակիլը բնակրի աժխուտի զեղեցիկ կտոր մը կը տեսնէր. Ռոսսինի ճաշակը ամենայսոր էր արուեստազիտական գործերու ընտրութեան մասին. Պալզաք՝ Լամարթին անտարբեր էին իրածչութեան. Ամենքս ալ վերջապէս կը զգանք մեր մէջ բարույ և շարի՝ վեհ և գոհեհիկ զգացմանց մըրցանքը, կը հիմանանց երբեմն բանի մը վրայ որ յաջորդ պահուն անտարբերութիւն և ծերեւու նորիանց ազդէ մեզ. Հազուազիւան են զեղեցիկն այն սիրահարը և տեսանովը. որ ներբին հրաշալիք ճառազայիլ մը լուսաւորեալ կը յաջորդին նշմարելու գծերուն՝ գյուներուն, ձայներուն, ինչպէս նաև տպաւորութեանց, կրից, խանդին, և սահմանափակ յղացմանց ու մատագիլթեանց մէջ ուրիշ աւելի կատարեալ, անսահման, բացարձակ, գերմարդկային զեղեցկութեանց տարերը:

Շարայարելի

Փ. Թէրզնու



## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ



Մատուցեան (Ա.) Բամսաստուդութիւններ (1892—1898). Երկրորդ հատոր. հրատարակութիւն Աւետիք Պողոսիանի: — Մոսկուա, տպ. Ք. Բարիուտարեանի, 1898. 8<sup>0</sup>, 225 էլ, զի՞ն՝ 4 բոլիք:

Վիշտը, կ'ըսեն, մարդը բանաստեղծ կ'ընէ. և յիրաւի ամենէն նշանաւոր բանաստեղծիմները կամ վշտի, կամ սիրոյ, և կամ ու է բառն զգացմանց ծնունդ են: Բանաստեղծը ծնած է վշտի համար, աղոնուական տեսներու համար, արտասուրի համար: Բանաստեղծութիւնը, ինչպէս կ'ըսէ զաղղիացի ցերողոյ մը, վշտին ըոյրին է, և ամէն կրող ու լացող մարդ՝ բանաստեղծ է.

իրաբանչիւր շիթ՝ քերթուածի մը տողն է, իրաբանչիւր քերթուած սիրտ մը:

Եւ Մատուցեան բանաստեղծ է, զի օծընուած է հեզ երգիչ մի զմբախտ ազգի, զի և վաղ ուսած է կեանցի տանջանցը, զի «վազ մատերմացած է հոգին վշտի հետո»: Բանաստեղծ մ'է Մատուցեան՝ զի կու լայ, զի կը հեծէ կշտալից կեանցի ծանր խաչին տակ, զի միշտ մոայլ կը տեսնէ երկինքը զլիխն, զի միշտ հայրածուած կը տեսնէ անմեղը: կը տեսնես զինքը՝ քնար ի ձեռին՝ մերթ շիրմի մը մօտ՝ ուր կը հրափրէ անցորդը հանգիստ կարդալու ցաջ նահատակին, մերթ մի ցանի կրակէ տօգերու մէջ ասջեւզ կը բերէ՝ զեղեցիկ պատկերվ հայրենիքի անցեալը. մերթ ներկան՝ ախուր գոյներով, ողբալի՛ պատկերով, կայծեր, Փոթորիկներ, Ալբաներ, Սկ ամներ, Ալկոծ ծով, կը փայլատակն, կ'սրուան, կը մնաչն, կը գոռան, կը փրփրին, և մերթ սէր՝ հայածուած սէրը, փր բոլոր ծաղկըներով, վարդով ու շուշանով, թիթեռնիկի մը նման կը թոշրափ ծառէ ծառ, ծաղկէ ծաղկի սուից կոռաւն մը գանկուր, գոզզըզալով փոթորիէ ըշուած թաչունի մը պէս, երբեմն մանկութեան ծիծաղ յիշատակներ, երբեմն սրտամաշ վշտերու տակ ընկնօւած՝ անցուսպ արցունըներ: Ահա Մատուցեանի քերթուածոց ընդհանուր յատակագիծը: Քնար մը՝ որու թելիքը թէպէտ միշտ նոյն զգացումները թիթեռացընն, թէպէտ շրլան հարուստ վսեմ խոյանըներով, թէպէտ նոյն զաղղիացիներու կրկնութիւններ, ընզայնմնացներ ըլլան, սակայն ախորժով կը լուսին, սիրով կը կարդացուին, զի սրտի հետ կը խօսին:

Մի՛ և նոյն զգացումները, մի և նոյն աշխորժէ կ'ունենայ մարդ կարդալով թարգմանութիւնները՝ որոնք կերպով մը շարայարութիւն են Մատուցեանի ցնարին հնչմանց, կամ արձականգ անոր թիթուումներուն: Յաջող է Մատուցեան նոյնպէս թարգմանութեանց մէջ, զորոնք կը ներկայացընէ իբրեւ

իւրացուցած՝ առանց բնագրին լեզուին հուսն ու համեմ զգացընելու, որ շատ զիւրին չէ։ Ենդուն ընդհանրապէս սահուն՝ թէ՛ ինցնազիր քերթուածոց և թէ՛ թարգմանութեանց մէջ։ միակ թերութիւն՝ որ կը տեսնուի, է անուշաղրութիւն տաղաչափական օրինաց, ներդաշնակութեան, շեշտերու, որուն վրայ կ'ու զենք հոս ցիշ մը երկարօրէն խօսիլ, վասն զի սոյս անուշաղրութիւնը կը տեսնուի նաև աածկահայ բանաստեղծից քերթուածներուն մէջ, և կամաց կամաց վախ կայ օրէնքի փոխուելու։

Հայկական տաղաչափութեան մէջ օրէնք է որ անդամատութիւնը, որշափ կարելի է, շեշտաւոր բառերու վրայ իյնայ. և ը զիրը՝ որ շեշտուելու ընդունակ չէ՛ յաջորդ անդամին անցնի. անհերքելի նշարտութիւն մըն է այս, և անհաւանելի զուր պիտի աշխատին գտնել անդամատութիւն մը՝ որ կատարուած ըլլայ ը ի վրայ (կը հասկըցուի ըն, ըս, ըդ) Ավակակ Պարթեւէս սկսեալ, Նարեկացին, Մագիստրոսը, Շնորհային ալ միասին առնելով՝ մինչեւ Բագրատունին։ Վերջինս իր Գաղղ. Քերականութեան մէջ գաղղ. տաղաչափութեան օրէնքներն աւանդելու ատեն, մերիներն ալ՝ առաջին անգամ ըլլալով՝ կ'աւանդէ. ուր շեշտի և անգամի վրայ խօսերով, կ'ըսէ. «Օրէսս սոնիմը տաղաչափութեան չյանգել ընաւ զանգամ տողից, որպէս և զտողն, ի ը, այլ՝ ամենայն յանցք բառից՝ յօրս դոյ ը, որը օրինակ ըս, ըդ, ըն, և այն, իրրեւ զհատած սողից շափական ոտանաւորաց՝ պարտին անցանել ի միւս անգամն, և անէ գործել վանկ. օրինակ իմն, յուժավանկ զուգանզամ տողս ոչ լինի ասել յերկնայինընք հրաժիրեան, այլ ի յերկնայինընք հոլեցան. Այդը օրինաց չի՞ց այլ ինչ պատճառու իմանալ, բայց զի ը ոչ ուրեց շեշտի ի լիզուի մերում, այլ միւս նախապատան նորա, (ինչպէս նոյն իսկ խօսակցութեան մէջ չենց ըսեր գիրքը, այլ գիրքը), ուստի և ը որպէս և այլ ամենայն վանկ և բառ մանաւանդ միավանկ որ

ինքն ոչ շեշտի՝ այլ նախադամն իւր, հարկաւ ի յաջորդ անդամն անցանէ (Էջ 56 4-2)։

Ծառուրեան ընաւ ուշ չի զներ հայկ. տաղաչափութեան այս կենսական օրէնքին, և իր գեղեցիկ տողերը կը ջատէ, կը մեցցընէ։ Դնենց հոս իրբեւ օրինակ բանի մը տողեր։

Զոյ բերեց կենամքը / իւր ապօք փառքին.

Բայց երկուա / այդ աստղերից

Փացը կարօտը / շնորմ փայտայելով

Մատող վշտերը / տաղով մուացման

Ինչ է լոյսը / ի՞նչ է խաւար

Ամրախտ նայրդ / գիր ըբաժէր

Գերշին շուշչը / հորում բացեց

Մեր ողջ տողմը / կողուպեցին

Եւ թուան երզը / սպազմւ արագ + մմ, մմ:

Ի զուր է փնտաել ներգաշնակութիւնը ըստուծ բանը այս և ուրիշ ասոնց նման շատ առղերու մէջ՝ զորոնք զանց կ'ընկնեց համառութեան համար. միայն զիտել կու տանը՝ որ եթէ այդ մեռեալ ըմերը յաջորդ անդամին անցուցած ըլլար, կամ յետևառաջութեամբ, օրինակի համար «կեանըը զոհ քերեց... Սակայն երկուանն... և այն, ըսելով դարման մըրբած ըլլար, այդ տափակութենէն զուր կ'իջէին։

Յիրաւի, ի՞նչ բանէ կը կախուէր Յունաց և Հոսկմայեցոց հին շափական վեցոտանույն հուագաւոր ներգաշնակութիւնը. չէ՛ որ հատածներու շատութենէն. և հատածն ինչ էր. Թող մեր տաղաչափութեան վեհազգյն վարժապետը՝ բագրատունին պատասխանէ. ի վեցոտանին «ոտք ոչ ի միոյ ամբողջ բառէ բաղկանան, այլ բազում անգամ վերջին վանկը նախազառ բառից ընդ առաջին վանկու յաջորդին կազմեն զուն. և այս հատուածունին վերջին վանկի կոչի առ նոսա հատած. և որշափ յոլովպայոյն հանդիպացին հատածքը ի միւմ տողի, այնչափ եւս զեղեցիկ և ճարտարակիս համարեալ է տողն. (Գալ. Քեր. Էջ 542): Դնենց հոս իրբեւ օրինակ մէկ մէկ տող Յունաց և Հոսկմայեցոց շափական վեցոտանին։

Infan / dum! si / stund<sup>3</sup> a / mues<sup>4</sup>, ter / raeque<sup>5</sup> de / hiscunt. (Ալբրտ.):

Πάτροκλέ, / μοι<sup>1</sup> δει / λγ<sup>2</sup> πλει / στον<sup>4</sup> κεχα / ρισμένε / θυμφ. (Հովհ.). 12

Մեր լեզուին բառերը գրեթէ բոլորն ալ  
բայր՝ այսինքն շեշտը վերջին վանկին վրան  
(թուղ բանի մը բացառութիւնները) ըլլալով,  
ընդունակ չեն հատածի, և բանի մը Հո-  
մերական տողը ըստուածները՝ զոր հին բե-

րականի թարգմանիչը՝ թարգմաներ յերիւ-  
րեր է իրեն օրինակ Յոնաց շափական վե-  
ցուանուոյն՝ լսածիս կը վկայեն. ահանենց  
օրինակի համար վերի յոնարքն տողին թարգ-  
մանութիւնն ու բաժանումը.

Պատրոկլէ / ինձ հի / քիս կարի / յայտ սի / բեցեալ / անձին:

Որչափ նուազաւոր և ներդաշնակ կը  
չնչեն յոյն և լատին տողերը, նոյնչափ  
խաղաղալոր կը հնչէ մերը. որով ի զուր  
պիտի յագնի հայ ականջը օրենք մը կամ  
չափ մը, կամ վանկերու սղում ու եր-  
կարում փնտուելու անոր մէջ. Այս օրինա-  
կին կը տեսնովի որ մենց չենք կրնաք մեր  
խեղուին ամէն բառերը հատուածել, այլ ա-  
նոնց միայն՝ որ ի բնէ շեշտ ոսինին\*, և հիշն  
պէտք ենք ընել անզամատութիւն ուր շեշտ  
կայ, անզդիացոց և իտալացոց պէս։  
Օրինակի համար, այսպէս, այնպէս, որպէս,  
որքան, ինչպէս, յայնենոյս, են, յարաշեշտ  
բառերուն մէջ, անդամը պէտք է լմնայ շեշ-  
տաւոր վանկին վրայ, և միւս վանկը անցնի  
յաջորդ անզամին. ինչպէս կը տեսնովի Շնոր-  
հալոյն հետեւեալ տողերուն մէջ.

Որպէս և յայն / ժամ ըլլուսին.

Վարեմ միմէ յայն / կոյս ամբողջապահ.

Ցեստ այս / որիկ հոեալ ջրասոյց ի վայր կոր-  
[ծանէլին] (Մագլուս.)

Նոյն բանն է նաեւ ըմբի համար. վասն զի,  
ինչպէս տեսանց, ո գրէն նախազաւը կը  
շեշտուի միշտ, որով անզամատութիւնը շեշ-

տուած անդամին վրայ պէտք է ըլլայ. այս-  
պէս.

Բամեալ ի քէ/րքս տարրասպէս..

Որպէս լցուիպ/արն թիր ալիթ (Ենորի .)  
Զոր յայ/ներմ զիշերի թիւրու թիւրոց տատուկիթի  
(Մագ.):

Ի պատկեր սաստուածութեան/նըդ քոյ սոհղծերը  
(Մարդ ի նորոյ. Ժողովեալ հըրէին/ցըն կլշուեցիմ արծաթ բազում.  
Ընկապեալ ըզուարին/նըն յաղթանակ նահուսաւ-  
(Կացմ.:

Զելլամեսուլ նահուսակա/ցըն մաստուցուք ի յըմ-  
(ծայում. (Ծոր.) են:

Որով յայտնի կը տեսնուի, որ ըթի յա-  
շորդ անզամին անցըը անհրաժեշտ է, և որ  
յոյնին կամ լատինին հատածին գեղցկու-  
թիւնը կը բերէ տողին։

Բաց ի այս ըթի և յարաշեշտ բառերու  
հատածէն՝ մեր արզի ցիրթուղը պէտք է ուշ  
փեխ ուրիշ կանոնի մալա, Ըսինց որ մեր  
լցուկին բառերը ընդհանրապէս բուժ են տ-  
սանձին եղած ժամանակ. բայց սակայն,  
երբ երկու բառ իրարու հետ առնչութիւն  
մունենան և միանան, անոնցմէ մին կը

\* Այսպիսի քանի մը բռնազբօս հատածի ո-  
րինակներ ունենք նաև Շարակնոյցն.

• • • և ոչ փոխա/դրութիւն բարուց  
• • • աստուածա/լիմ բամին  
• • • յորմ/ցոցեր զիշունիին  
• • • եկայք վերա/պատուեցուք ևս, ևս,

որոնց անբնականութիւնը ակնյայտնի կը տես-  
նուի և հետեւելի չեն: — Առաջանութիւնը  
պէտք չէ զոհուի երաժաւութեան, վասն վի-  
եթէ զահուի ալ. բաղձացուած ներդաշնակու-  
թիւնը առաջ չէ դար, երբ լեզուին սուոյն հա-

կառակ է այս: Ոչ երբեք լատին մը կ'երգէ  
Dominius, այլ միւս Տօնուս, որ է ըսել, ինչ  
իսալ որ պիտի ընէ, բայսին ընդական շեշտին  
դրայ կընէ: — Բազրատունին՝ առանց այս-  
պիսի բանագրոս բատաճներու թարգմաներն է  
Հնուերու, Վիրագիին, Որատին, Միլտոն,

Ճաշակը ողբերգործեանց, են, են. «Հայկ» ին  
մէջ տեղ մը միայն բռնազառուել է եօթնկանգ-  
նեան բառ մը երկուքի ճեղքել և ըսել.

• • • և սանդարձ / մետականաց,  
որ կարծեմ 22210 առդ քերթուածի մը համար  
ներելի է:

շեշտաւորի , և այդ շեշտը կ'ըսուի բատ  
դրից . մեծ ածականը բռնջ բատ մըն է ,  
նոյնպէս ծառ գյականը . բայց երբ միանան՝  
նախաղասը կը շեշտանայ . մեծ ծառ , կամ  
ծառ մեծ . պյապէս յատկացուցիչ յատկա-  
ցեալի , մակրայ՝ բայի , ածական՝ գյականնի ,  
գյական՝ նախաղորութեանց հետ անձուկ կեր-  
պով միանալով նախաղասը միշտ կը շեշ-  
տաւորի . և այսպիսի բնական շեշտեալ եղած  
անդամատութիւնը սրանչելի փոփոխութիւն կը  
մոցընէ տողից մէջ , և կը զուարճացընէ  
ընթեցողը . Որով ինչպէս որ յոյն և լատին  
վեցուանաւոյն մէջ հատածի յաճախութիւնն էր ,  
որ տողին այն սրանչելի նուազուոր գե-  
ղեցկութիւնը կու տար , մեր ևս թէ՛ չափա-  
կան և թէ՛ յանցաւոր ուսանաւուրաց այդ  
գեղեցիկ ներդաշնակութիւն տողը՝ բնա-  
կան շեշտով եղած անդամատութիւնն է . տես-  
նենք բանի մը ճարտար օրինակներ .

Զի է պարօնմբ լրացոյ և թամէ ալլուսնակամ .  
Որպէս զըրէ Պօլոս ամօնթն այն ընտրութեամ .

(Ենորդ.)

Ամդ կարմիր ծովը հեղծեալ լիմէր , դիման չուր-  
(քթ կայլիմ .)

Ամդ ի խորոց համիմ սասանք ոսկի յամիմ պա-  
(համշողլիմ (Մագլաւու .)

Ի՞նչպէս կը վարուի Մատուրեան այս կա-  
րեւոր կանոնին հետ . Մեկի կը թուր որ  
ոչ այնչափ լաւ կերպով . առնենք օրինակի  
համար զանազան չափերով բանի մը տա-  
ղեր , և տեսնենք թէ ինչպէս կ'անդամատ .

Մեզ հետ խնդում է / և մեզ հետ լավի .

Որ միշտ լսաւուսն է / տամէնամիք ժամում . .

Եւ յանափ այնքան / խաղաղ բռպէներ ,

Որ երեսմ այնպէս / խուռլի երամով

Նայում էի / երկմի խորըում

Փալոր. մ էիմ / շամ սասղեր

Հո՛ղ էիր և / գառման հող

Ոչ երկիրը , / ոչ արեւ / կենսարեր

Զըկար ո՛չ վերջ / մուսցուսծ էր / և թիւը

Մայր երկիրը / լուս հեծում է / լողաւով ,

(իւ , և :

Առաջին տողին անդամատութիւնը պէտք  
էր ըլլար խեղումին վրայ , և ոչ էին , կ'ը-  
սենք խեղում է , և ոչ խեղում է . նոյն-

պէս երկրորդը , և այլն , յաջորդաբար : Զենց  
ըսեր սակայն , որ Ծատուրեանի տողերը  
ծայրէ ծայր պյապէս ըլլան . ոչ . բայց լաւ  
տողերը համեմատութեամբ խեղներուն շատ  
քիչ են . ահա բանի մը օրինակներ ալ լաւ  
անզամատուած տողերէն :

Երգիր մեզ այն հիմ / երգը դարեւոր ..  
Երգիր ... թո՛ղ քո երգն / անկեղծ , ոգելից ...  
Թող մոքա մեր ծամիր / ուղիմ հարթելով ...  
Որ ուղէր միայն / աչեր բոցալսու ..  
Որպէս անուպան / սղրիւր երգերիս ..  
Անվերջ եմ մարգկանց / ցաւերթ ու հոգսեր .  
Հիւր է եկել / Սայսին ուրանի / գեղեցիկ . և :

Ցաղաչափաւթիւնն չհասկըցող մ'անգամ  
կ'իմանայ թէ ինչ կորով , ներգանակութիւն  
կայ այս վերջին տողերուն մէջ , և ինչ դան-  
դաղութիւն վերիններուն մէջ :

Ցանց կ'ընեմ ըմով վերջացած տողերուն  
վրայ խօսել , որոնք թէվէտ ցանցառ են ,  
բայց միշտ տափակ են , և ոտանաւորին գե-  
ղեցկութիւնը կը խանդարեն :

Գարով բառից բնական շեշտերուն , Ծա-  
տուրեան ասոնց մէջ ևս շատ ոչազիր չ'երեւիր .  
յարաշետ բառերը , զորոնք ընտիր զրշա-  
զիրը առ հասարակ , նոյնպէս ի նախնեաց  
առ մեր հասած ուսանաւորները , ըլլայ Շա-  
րակնցուն , ըլլայ ուրիշ ցերթուածներէն , վերջ-  
ընթեր վանկին վրան կը շեշտեն , Ծատու-  
րեանի ցերթուածոց մէջ վերջին վանկին վր-  
րայ շեշտուած կը տեսնենք . Նախնեաց այն-  
քանը հոն այնքան (Էջ 14) եղած . որպէս  
որպէս (Էջ 4) , որքանը՝ որքան (Էջ 45) .  
ինչքան (Էջ 53) , ինչպէս , են . ինչնշան , ե-  
րեց տեղ շեշտուած ինչու , և տեղ մըն ալ  
ճիշդ . ինչյին է պետք (Էջ 14) , և յդնշա (Էջ 17) ,  
լանի (87) , ոգէլից երգեր (28) կապրի  
(երեց անզամ 474) , հայերէն լեզուի հո-  
գոյն հակառակ շեշտուած :

Դրատուրեանի ցերթուածոց մէջ մեծ սով  
կայ ըլլերու . մինչզեն տաղաչափութեան ո-  
րինաց համեմատ՝ պէտք էր զորուկ ըթէ՝  
այն ամէն տեղ ուր վանկ կը կազմէ , Ծա-  
տուրեան նայ տաներէն առաջ անզամ՝ որ  
անզամատ պէտք է դնել՝ զանց կ'ընէ , կամ  
թէ ըսեմ , հոգ չըներ , երբեմն կը զնէ ,

երբեմն չի դներ . օրինակի համար տասնու-  
ահան այս տողին մէջ .

Գլաւիչ էիր / դու նոցա համար (36)

ուր ըթին կարեւորութինը ակներեւ է ,  
ապա թէ ոչ բառավանկ կը կարդացուի , և  
ոտանաւորը կը կաղայ :

Ութավանկ սա տողին մէջ

Մըսպով նեռո՞ւ / կըսլամաս .

կարեւորագոյնը չի դներ : Մետասանոտեան  
(Հետեւեալ տողին մէջ

Ուզո՞ւմ ես դու / տեսնել զօնմ / բժութեամ  
Մի՞ հրաշքը / . . . .

և հնգավանկ սա տողերը .

Գնա ցուրտ ծմեռ  
Քո մէջ չկայ սէր  
Զկոյ զգագումնք  
Քո մէջ չկայ կեանք  
Կեանքի հըրասպոր .

Շատ աւելի լաւ կ'ըլլար , և պէ՛տը էր  
ալ զրե՛լ ընթերցման փիւրութեան և ոտնա-  
ռութինները վերցնելու համար

Գընա ցուրտ ծրմիռ  
Քո մէջ չկայ սէր  
Զըկայ ըզգացմումք (տղեղ)

Ինչպէս վերջինին մէջ կը գնէ , ևն , ևն :

Ընդհանրապէս հայերէն կը խօսի Մա-  
տուրեան . կամ թէ ըսեմ , իր օսար բա-  
ռերը շատ անշան են բազգաամամբ ուրիշ  
ուսւահայոց օտար բառերու լեզէնին , ունի  
բանի մը իրէն սիրելի թուրք բառեր , օրի-  
նակի համար աղա , չէր , եար , զօր տոշին  
(65) դուռքան (66) , աղիզ (76) , եարար  
(87) , ևն , և ծէկալոյ խանափնդոր բառը ,  
որոնց կարգէն կրնանք թուել նաև Օ՝ զար-  
մացականը՝ որ հայերէն չէ , և որ ստէկ կը  
տեսնուի . որո՞նց ես Մատուրեանի բառա-  
րանին պակախը փափաքելի և յուսալի :

Կը կնքենք հոգ ակնարկնիս , որ առանց  
մեր ուղելուն՝ սեւեռմննիր փոխուցաւ : Մեր  
ըրած բանի մը փիաղութինները՝ Մատու-  
րեանի երթուածոց յարզը նուազցընելու

զիտաւորութինը չունին . մանաւանդ թէ այն  
յարգն էր որ ստիպեց զմեզ ընելու զանոնք .  
վստահ ըլլարով՝ որ եթէ այն մի բանի տա-  
ղաչափական թերութինները չկտնուին ,  
շատ աւելի մեծ կ'ըլլար անոնց յարզը . և կը  
սիրենց յուսալ՝ որ Մատուրեան իր յաջորդ  
ցերթուածոց մէջ , կամ նոյն իսկ առաջին  
հասորին՝ որ սպառած է՝ և որու մէջ եւս  
քիչ շատ ուղղելիքներ կը զանուին՝ անշուշտ  
վերստին տպագրութեան տաեն ուշ կը գնէ  
ըսուածներուն : Հ . ԱՐՍԽԱ ՊԱԶԻԿԱՆ

ԵՐԵԲ ՆՈՐԱՏԻՊ ՎԻՊԱՍՆԱՆԻԹԻՒՆՔ

2 . Ա . Անարոնեամց թաշօն (Պատկեր)  
արտատպուած Մշակ լրագրից , թիֆլիս . տպ .  
Մ . Շարաձէ և ընկ . Նիկ . 24 . 1899 . —  
Գինն է 5 կոպէկ : Գիրըը կը բաղկանայ 40  
էջերէ , տպագրութիւն և խուզիթ մաքուր են :  
վիպասանութեան մեծ զիցազն է մի ծե-  
րանի որսորդ « Ղցո » . Հեղինակը ճար-  
տար կերպով կը նկարագրէ ասոր լեռնցի  
կազմութիւնը և վայրագ բնաւորութիւնը : Ըն-  
թերցողը՝ Ղցոն միշտ սրտանմիջի վիճակի  
մէջ և կարելիցութեան արժանի կը տեսնէ :  
Այս ծերունի գեղջուկն՝ տեսնելով որ իւր ամ-  
բողջ ընտանիքը բրգեն կը յափշտակեն կը  
տանին , յուսահատած , կ'այրէ ամբողջ տու-  
նը իր բոլոր կարասիներով , և կը սկսի իւր  
փորբիկ որպէսն հետ թափառական շըլիլ ,  
և վերջապէս վիրմառու զագանային արին-  
հեղութիւն մընելով , կը բանտարկուի և  
փորբիկ զաւակն բոլորպին որբ կը մնայ .  
Հոյ կը վերջանայ վիպասանութիւնը , առանց  
յայտնելու ոչ բանտարկեալին և ոչ նորա խեղճ  
որդույն (թումօն) զախճան :

3 . Ալրապէտ ծանօթ հայ վիպասանը ,  
վերջերս ի լոյս ընծայեց մի բանի նոր վիպա-  
սանութիւններ , որոց երկուցին ժառանգմերի  
և Ասաքէի կրայ կը փութանց փորբիկ տե-  
ղեկութիւն մը տալու : Ծնդհանրասկս Ալրա-  
պէտ , անփոյթ չըլլար , իւր վիպասանու-  
թեանց մէջ զանց ընելու կամ աւելորդ հա-  
մարելու վիպասանական համեմեները , թէեւ  
զանոնց պարկեշտութեամբ կը զետեղէ պատ-  
մութեան մի բանի զիխակարգութեանց մէջ :